

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՒՇՈՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԵՐԻԱ № 1

Խ-84.

**ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

I

ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱՆ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ—ԱԼԲՈՍ)

Շրջանի հնագիտական բարեգով լեվ ռուսերեն, ադրբեջաներեն ու ժրաներեն
ամփոփումներով

**ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ
ДЕЛИЖАНСКОГО РАЙОНА
АРМЯНСКОЙ ССР**

Б
28.051

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՂ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԵՐԻԱ № 1

ՐԲ
13013

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

I

ԴԻԼԻՉԱՆԻ ՇՐՋԱՆ

(ՈՒՂԵՑՈՒՅՑ — ԱԼԲՈՄ)

Շրջանի հնագիտական բաժնեգով յեվ ռուսերեն, ազգբեջաներեն ու ժրաներեն
ամփոփումներով


ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ ДЕЛИЖАНСКОГО РАЙОНА

Diliçan rajonunun tarixi abdiələri

**LES MONUMENTS DE LA REGION
DE DILIDJAN**

Պատ. խմբագիր՝ Ս. ՊՈՂՈՍՅԱՆ
Վերահսկչ. սրբագր. Ռ. ՏՈՆՅԱՆԻ

Պետհամալսարանի
Տպարան
Գլավիլիս № 541
Պասվեր № 84
Տիրամ 2000



5-28051

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ընդառաջելով մասսայական պահանջին՝ ՀԽՍՀ Կենտգործ-
կոմիտեի կից Հուշարձանների Պահպանության Կոմիտեն ձեռնար-
կել է հրատարակելու Հայաստանի անցյալի նյութական կուլտու-
րայի հուշարձանների վերաբերյալ ուղեցույցներ ըստ շրջան-
ների— ուսերեն, ազգրեջաներեն և ֆրանսերեն ամփոփումներով,
շրջանի հնազիտական քարտեզով և հուշարձանների նկարների
ալբոմով: Այդ ուղեցույցները հնարավորություն կընձեռեն
տուրիստներին, եքսկուրսիոն խմբերին և առանձին ուսումնասի-
րողներին իրենց ուղևորությունների ընթացքում ծանոթանալու
ավյալ շրջանի պատմական կարևոր հուշարձաններին:

Ներկա ուղեցույցը— «Իլիշանի շրջանի պատմական
հուշարձանները»— այսպիսով, հրատարակ է գալիս վորպես այդ
շարքի հրատարակությունների առաջին գործը: Հաջորդաբար
լույս կընծայվեն նաև մյուս շրջանների ուղեցույց-ալբոմները:

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

| | |
|--|----|
| Ներածություն | 62 |
| Գլխիցանի քղանի պատմական հուշարձանները | 9 |
| 1. Հաղարծին | 11 |
| 2. Գոշավանք | 14 |
| 3. Զուխտակ-վանք | 18 |
| 4. Մաթոսավանք | 19 |
| 5. Վիշապ | 19 |
| 6. Ուսումնասիրություն կարոտ հուշարձաններ | 21 |
| 7. Ալբոմ | |
| 8. Շրջանի հնագիտական քարտեզը | |

СОДЕРЖАНИЕ

Исторические памятники Делижанского района

| | |
|---------------------------------|---------|
| 1. Агарцин | Стр. 27 |
| 2. Гошаванк | 28 |
| 3. Чухтак-ванк | 29 |
| 4. Вишап | 30 |
| 5. Альбом | |
| 6. Археологическая карта района | |

Մ Մ Ն Դ Թ Ր Ի Շ Ժ Տ Ի

Dilidjan Rajonunun Tarixi Abidələri

| | |
|--|-----------|
| 1. Haqartsin | Səhifə 31 |
| 2. Qoşavanq | 32 |
| 3. Cuxtaq—vanq | 33 |
| 4. Vişap (Əzdəha) | 34 |
| 5. Albom və rajonun arxeologija xəritəsi | |

TABLE DES MATIERES

Les monuments historiques de la région de Dilidjan

| | |
|-------------------------------------|----|
| 1. Haghartsin | 35 |
| 2. Gochavank | 36 |
| 3. Djoukhtak-vank | 37 |
| 4. Vichap | 38 |
| 5. Album | |
| 6. Carte archéologique de la région | |

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Դիլիջանի շրջանը, վոր հնում կազմել է Կայենո գավառի մի մասը, հարուստ է անցյալի նյութական կուլտուրայի բազմատեսակ մնացորդներով:

Պատմական անցյալի այդ հուշարձանների թվին պատկանող քաղաքացիական և կրոնական նշանավոր կոթողների մեծագույն մասը վերաբերում է հայոց պատմության այսպես կոչված Չաքարյանների շրջանին, վորը սերտ կերպով կապված է վրաց Թամարա թագուհու իշխանության ժամանակաշրջանի (1184—1213) պատմության հետ:

Պատմական այդ դարաշրջանում ֆեոդալական Հայաստանի նյութական ու հոգևոր կուլտուրան զգալի չափով սկսեց զարգանալ: Այդ ժամանակաշրջանին վերաբերող ճարտարապետական հուշարձանների խոշորագույն մասը Դիլիջանի շրջանում՝ մեծ արժեք է ներկայացնում վոչ միայն վորպես ֆեոդալական արվեստի և ճարտարապետության իրական կոթողներ, այլև իրենց վրայից բազմաթիվ վիմական արձանագրություններով չափազանց հարուստ նյութ են ընձեռում հայկական պատմագիտությանը՝ Հայաստանի ֆեոդալական ֆորմացիայի ուսումնասիրության և լուսարանության համար:

Չափազանց ուշադրով են այդ տեսակետից յերկու մոնումենտալ հուշարձանները՝ Գոշավանքը և Հաղարծինը, վորոնք իրենց ճարտարապետական կառուցվածքներով, որնամենաներով, բարելյեֆներով և վիմական բազմաթիվ կարևոր արձանագրություններով նշանավոր տեղ են գրավում հայկական հին կուլտուրայի հիշատակարանների հարուստ կոլեկցիայի մեջ:

Մեծ արժեք է ներկայացնում նույնպես «Ձուխտակ-վանքը» իր վիմական հարուստ արձանագրություններով և ճարտարապետական արվեստով:

Բացի ֆեոդալական դարաշրջանի հուշարձաններից, Դիլիջանի շրջանում մենք հանդիպում ենք ավելի վաղ դարաշրջան-

ների պատկանող նյութական կուլտուրայի մնացորդների, վորոնց մի մասն է հայտնաբերված առայժմ:

Այդպիսի մնացորդներից առանձնապես ուշագրավ են Արդա- նիշ գյուղի մոտ գտնված «վիշապ»-ը և Գոլովինո գյուղի ու «Ռեզկին-լագերի» մոտակայքում պեղված դամբարանները: Այդ հուշարձաններից վերջինները վերաբերում են բրոնզե դարի վեր- ջին, յերկաթե դարի սկզբին ու հետագա դարաշրջաններին, իսկ առաջինը՝ ավելի արևայիկ շրջանին:

Ավելորդ չենք համարում նշել, վոր Դիլիջանի շրջանը տա- կավին հնագիտական մանրագնին ուսումնասիրության չի յեն- թարկված և այդ պատճառով ներկա ուղեցույցի մեջ տեղ գտած հուշարձաններն իրենց թվով չեն կարող սպառել այդ շրջանում յեղած հնությունների ամբողջ հարստությունը:

Կազմող՝ Հ. ԹՈՒՄՅԱՆ

ԳԻՒԼԻՋԱՆԻ ՉԻՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՋԱՐՉԱՆՆԵՐԸ

1. Հ Ա Ղ Ա Ր Ծ Ի Ն

Դիլիջանից 14 կիլոմետր հեռավորության վրա, սառնորակ աղբյուրներով հարուստ անտառապատ խոր ձորի ձախ լանջին տեղավորված են Հաղարծնի հուշարձանները (Ալբ. նկ. 1, 2):

Հաղարծին տանող յերկու ճանապարհ կա: Դրանցից մեկը լեռնային է և համեմատաբար կարճ. կարելի յե գնալ միայն վոտքով: Այդ ճանապարհն անցնում է Շամախյան (Պողոսքիլի- սա) գյուղի հանդերով դեպի հյուսիս և լեռների կարճ շղթան կտրելով, իջնում է Հաղարծնի վրա՝ հարավ-արևմտյան կողմից: Մյուս ճանապարհն անցնում է Իջևան տանող խճուղով և Դի- լիջանից 7 կիլոմետրի վրա՝ Հաղարծին և Աղստեղ գետե- րի միացման կետում շինված կամուրջն անցնելով, անմիջապես թեքվում է դեպի Հաղարծնի ձորը. այստեղ ճանապարհը փոխ- վում է սայլուղու, վորը մոտ մեկ կիլոմետր բաց տարածություն անցնելով, մտնում է անտառների մեջ և Հաղարծին գետա- կի ափերով աստիճանաբար բարձրանում ու անցնում է մեկ փայտաշին լայն կամրջով, վորտեղից թեքվում է դեպի ձախ ու բարձրանալով՝ տանում ուղիղ Հաղարծին: Ծանապարհի այս մասն ունի մոտ 7 կիլոմետր յերկարություն, սակայն շրջապատված լինելով շատ հարուստ բնությամբ, բավականության համար կա- րելի յե գնալ նաև վոտքով:

Հաղարծնի հուշարձանների խումբը բաղկացած է իրար մոտ շինված չորս մեծ և փոքր հուշարձաններից, մեկ գավթից, ճար- տարապետական բարձր արվեստով շինված սեղանատնից և զբանց մոտակայքի մի քանի կիսավեր փոքր շինքերից ու խաչարձան- ներից:

Ա. Գլխավոր հուշարձանը (Ալբ. նկ. 3, 4), վոր կոչվել է «սուբբ Աստվածածին», շինված է խաչաձև չորս կամարների

վրա, առանց սյունների, սրբատաշ մոխրագույն քարով: Հուշարձանը գմբեթավոր է: Բեմի յերկու կողմերում կան խորաններ, ունի յերկու դուռ՝ հարավային և արևմտյան կողմերից: Այս հուշարձանը կանգուն է և ամբողջական. յերկարությունն է 14,50, լայնությունը 11 մետր: Հուշարձանի վրա թե ներսից և թե դրսից կան արձանագրություններ, մասամբ յեղծված. արձանագրությունների մեծ մասը վերաբերում է հուշարձանի նորոգություններին: Հարավային դռան վերևը խոշոր տառերով փորագրված է Թ. Ե. Ի (1071), վորը և համարվում է հուշարձանի կառուցման թվականը: Այդ դռան մոտ, պատվանդանի վրա կա մի մեծ խաչարձան՝ գեղեցիկ որնամենտներով: Արևելյան պատի վրա, դրսից, յերկու լուսամուտների մեջտեղը, վերևի կողմում, մեկ ամբողջական քարի վրա կա մի բարձրաքանդակ, վոր ներկայացնում է յերկու վեղարավոր վարդապետներ, վորոնց մեջտեղում քանդակված է հուշարձանի մակետը:

Բ. Յերկրորդ հուշարձանը (Ալբ. նկ. 6) շինված է գլխավոր հուշարձանի հարավային կողմում: Կանգուն է: Ունի բեմ, չորս փոքր խորաններ: Յերկարությունն է 9, լայնությունը 8,70 մետր. այդ հուշարձանը նորոգության է յենթարկվել 1155 թվին: Ներկայումս կանգուն է:

Գ. Գավթի (Ալբ. նկ. 7). յերկրորդ հուշարձանին կից է գավթի, վոր կառուցված է XIII դարի սկզբին, Իվանն Աթաբեկի վորդի Սարգիս Իշխանի ձեռներեցությամբ: Հուշարձանը շինված է 4 միապաղաղ սյունների և 12 կիսասյունների վրա: Ունի ցածրիկ կիսագմբեթ: Ներսի և դրսի պատերի վրա կան բազմաթիվ հետաքրքրական արձանագրություններ: Հուշարձանի յերկարությունն է հյուսիսից հարավ 14,30, լայնությունը՝ արևելքից արևմուտք 11,50 մետր:

Գավթի հարավային պատի տակ, մի բոլորովին ավերված փոքրիկ մատուռի մեջ կողք-կողքի գտնվում են Կորեկյան (Լուսվա) յերկու թագավորների գերեզմանները: Գերեզմանաքարերից մեկի վրա փորագրված է «ՍՄՏ [Սմբատ] ԹԳ [Թագավոր]», իսկ նրան կից գերեզմանաքարի վրա՝ «Այս է հանգիստ... ԹԳ [Թագավորին] Գագկայ»:

Դ. Յերրորդ հուշարձանը (Ալբ. նկ. 8) շինված է յերկրորդ հուշարձանի արևելյան կողմում, նրան շատ մոտ: Կառուցված է ամբողջովին սրբատաշ մոխրագույն քարից, ճարտարապետական բարձր ճաշակով: Ունի չորս փոքր խորան: Յերկարությունն է

6,40, լայնությունը 5,60 մետր: Այս հուշարձանը կառուցված է Ո Ղ Գ [1244] թվին: Հարավային պատի վրա դրսից կա մի արձանագրություն Ռ Ճ [1651] թվականի, վոր վերաբերում է հուշարձանի նորոգության:

Ե. Չորրորդ հուշարձանը շինված է ավագ հուշարձանի հարավային կողմում և կապ է յերկրորդին (Ալբ. նկ. 9): Սա փոքրիկ է, կառուցված սրբատաշ քարից. գմբեթ չունի. մեկ լուսամուտ, ներսում փոքր բեմ. յերկարությունն է 6,30, լայնությունը 4 մետր. ունի արձանագրություն՝ դռան ճակատին:

Զ. Սեղանատուն.— Այս շենքը կազմում է Հաղարծնի հուշարձանների զարդը: Մեր խիստ սակավթիվ քաղաքացիական հուշարձաններից մեկն է և թերևս միակ լավ պահպանվածը (Ալբ. նկ. 10, 11, 12, 13): Կառուցված է 1248 թվին, ճարտարապետական մեծ տաղանդով: Ունի յերկու սյուն և 12 կիսասյուն: Առաստաղը հանգչում է չորս իրար խաչաձևող հոյակապ կամարների վրա և հանդիսանում է այդ յեղանակով կառուցված շենքերի լավագույն որինակներից մեկը: Կառուցողն է Միսա: Այդ հանձարեղ ճարտարապետի անունը քանդակված է հուշարձանի ներսում՝ արևմտյան յերդիկի հյուսիս-արևելյան անկյունում՝ վերից վար, իսկ անվան սկզբնատուրը՝ Մ փորագրված է շատ քարերի վրա:

Հուշարձանը ներսից ունի յերկու քանդակազարդ մեծ յերդիկներ և յերկու լուսամուտ՝ հարավային կողմից: Դռներից մեկը կամարակապ է և գտնվում է արևմտյան կողմում, իսկ մյուսը՝ հարավային պատի արևմտյան ծայրում: Հուշարձանի յերկարությունն է 23, լայնությունը 10 մետր:

Այդ շենքի կառուցման թվականը կարելի չէ տեսնել փոքր դռան շուրջը գեղեցիկ տառերով փորագրված արձանագրության հենց սկզբում:

Է. Գլխավոր հուշարձանի արևմտյան կողմում, յերեքմի շենք գավթից մնացել են հյուսիսային և արևմտյան պատերը: Այդ արևմտյան պատի և սեղանատան միջև գտնվում են կամարակապ շենքի մնացորդներ. այդ շենքը հավանորեն ծառայել է վորպես խոհանոց:

Ը. Հաղարծնի մոտերը՝ արևելյան կողմում կան յերեք կիսակործան փոքրիկ մատուռներ և տապանատներ, կողքերը գեղաքանդակ խաչքարերով:

Հաղարծինը Հուշարձանների Պահպանության կոմիտեյի ջանքերով մաքրվել է կեղտից և կարգավորվել 1936 թվի հուլիս-սեպտեմբեր ամիսներին: Այդ ժամանակ կղմինդրով ծածկվել են սեղանատան ու գավթի կտուրները և շինվել են հուշարձանների դռները: Նույն թվին ձեռնարկվել է նաև բնակելի շենքի կառուցմանը:

Թ. Հաղարծին գյուղատեղի. գտնվում է Հաղարծնի ճանապարհի վրա, նրանից մոտ 2 կիլոմետր հեռու, Հաղարծին գետակի ձախ ափին: Այդտեղ և դրանից վերև կան թափված խաչքարեր:

Ժ. Սազնաքար. քարայր է, մի կողմը կրաշաղախով շարված է պատ. գտնվում է Հաղարծնի հյուսիս-արևմտյան կողմում, մի անմատչելի ժայռի մեջ: Բացի այդ քարայրից, Հաղարծնի ձորում կան բազմաթիվ այլ քարայրեր, վորոնք ուսումնասիրված չեն:

2. ԳՈՇԱՎԱՆՔ

(ՆՈՐ ԳԵՏԻԿ)

Գոշավանքը գտնվում է Իրիջանից դեպի արևելք՝ մոտ 17 կիլոմետր հեռավորության վրա, Տանձուտ կոչված ձորի մեջ, հարավային, արևմտյան և հյուսիսային կողմերից շրջապատված բարձր անտառապատ լեռներով (Ալբ. նկ. 14): Հուշարձանները շինված են ծովի մակերևույթից 1250 մետր բարձրություն ունեցող մի գեղեցիկ սարալանջի վրա, համանուն գյուղի մեջ:

Իրիջանից Գոշավանք կարելի չէ գնալ յերկու ճանապարհով: Իրանցից մեկն ավելի կարճ է, մոտ 10 կիլոմետր և պետք է գնալ վոտքով կամ ձիով: Այդ ճանապարհը բարձրանում է Իրիջանի միջով, թեքվում է դեպի արևելք, անցնում է խիտ անտառներով, Պարզ-գյուղ կոչված գեղատեսիլ լճակի մոտով և իջնում է Գոշավանքի վրա՝ արևմուտքից: Մյուս ճանապարհն ավելի յերկար է և պետք է գնալ Իջևան տանող խճուղով՝ մինչև Ջարխեչ գյուղից ներքև՝ 11 կիլոմետրի վրա յեղած մեծ կամուրջը, վորտեղից բաժանվում է դեպի Կարմիր գյուղ տանող խճուղին. այդ ճանապարհով մոտ 3 կիլոմետր անցնելով՝ դեպի աջ բաժանվում է մի լեռնուղի, վորը տանում է Գոշ գյուղը: Այդ ճանապարհի մեծ մասը կարելի չէ գնալ ավտոմեքենայով կամ կառքով, իսկ դեպի Գոշ տանող լեռնային կարճ ուղին՝ սայլով կամ ձիով:

Գոշավանքը բաղկացած է մի խումբ հուշարձաններից, վորոնցից մի քանիսը դեռ կանգուն են, իսկ մյուսները կիսավեր:

Հուշարձանների այդ խումբը կոչվում է հայկական հին ուրենքների հավաքագրող, «Դատաստանագրքի» հեղինակ Մխիթար Գոշի անունով:

XIII դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Մխիթարը ծնվել է Գանձակ քաղաքում: Փոքր հասակից ծնողները Մխիթարին տալիս են «յուսուսն գրոց սրբոց», իսկ յերբ հասակն առնում է, ձեռնադրել են տալիս վարդապետ: Գոշը յերկար թափառումներից հետո ընակույթյուն է հաստատում Գետիկ կոչված վանքում, վոր շինված էր Աղստեղ գետի աջ ափին, իսկ հետագայում, յերբ յերկրաշարժից այդ վանքն ավերվում է, Գոշը լքում է այն և ընտրելով նոր վայր, ժամանակի անվանի ֆեոդալներից մեկի՝ Վախթանգ իշխանի աջակցությամբ կառուցում է ներկայիս Գոշավանքը, անվանելով այն Նոր Գետիկ:

Ա. Գլխավոր հուշարձանը կոչվում է «Աստվածածին» (Ալբ. նկ. 15): Այս տաճարն է, վոր Մխիթար Գոշն ավարտեց հինգ տարվա ընթացքում, սկսելով կառուցումը 1191 թվից: Վանքը շինված է սրբատաշ քարով: Պատերն անխախտ են մնացել, բայց գմբեթը ձեղքված է և յենթակա փլվելու վտանգի: Հուշարձանն ունի չորս բարձրաշեն կամարներ, վորոնց վրա կանգնած է գմբեթը: Յուրաքանչյուր կամարի տակ կա մեկ լուսամուտ, իսկ գմբեթն ունի չորս լուսամուտ: Հատակը սալքարած է: Սեղանի աջ ու ձախ կողմերից ունի յերկհարկանի խորաններ:

Յերկրորդ հարկ կազմող խորանների մուտքը բեմի վրայից է: Հուշարձանն ունի յերկու դուռ՝ արևմուտքից և հյուսիսից:

Հուշարձանի յերկարությունն է 15,75, լայնությունը 11,50 մետր:

Աջակողմյան խորանի ճակատին փորագրված է ՈՍ (1191 թ.): Ավագ խորանի վրա ևս կա ուրիշ ընդարձակ արձանագրություն: Արձանագրություններ կան նաև հուշարձանի արևելյան, հարավային և հյուսիսային պատերի վրա, վորոնց մեծ մասը փորագրված է, իսկ փոքր մասը կարմիր ներկով զրված է ծեփի վրա:

Բ. Գավիթ. «Աստվածածնի» արևմտյան կողմում, նրան

կպած կա գա վիթ, շինված սրբատաշ քարից, «Աստվածածնի» հետ միաժամանակ, չորս հոյակապ, միապաղաղ և բոլորակ սյու- ներով և 8 կիսասյուներով, վորոնց վրա կանգնած են կամարա- կապ տանիքն ու գմբեթը: Հատակը ծածկված է սալքարով: Արևելյան պատի մեջ, աջ և ձախ կողմից կան յերկհարկ խորաններ: Այս պատին կցված են սրբատաշ քարից շինված, բեմի նմանութուն ունեցող փոքրիկ պատվանդաններ, վորոնց վրա քանդակված են փոքրիկ սյունազարդ կամարներ: Գավթի յուրաքանչյուր կամարի տակ յեղել է մեկ լուսամուտ. այդ լու- սամուտներից մի քանիսն այժմ փակ են: Հուշարձանն ունի յեր- կու դուռ: Հուշարձանի յերկարութունն է 15,79, լայնություն- նը 13,40 մետր: Գավթի արևմտյան դռան վրա կա արձանա- գրություն:

Գ. Յ ե ռ կ ռ ռ զ հ ու շ ա ռ ձ ա ն ը կ ո չ վ ու մ է «սուրբ Գրի- գոր» (Ալբ. նկ. 16, 17): Սա շինված է ավաղ հուշարձանի հարա- վային պատին կից: Այս հուշարձանի միայն պատերն են անխախտ մնացել. գմբեթը քանդված է: Պատերի վրա կան գեղեցիկ քան- դակներ և արձանագրություններ, վորոնք վերսբերում են հու- շարձանի շինությանը և նվիրատուություններին: Ունի 11,90 մետր յերկարություն և 9,12 մետր լայնություն: Հարավային պատի վրա կա պատի ժամացույց: Հուշարձանի արևելյան պատի տակ կան խաչքարեր: Այս հուշարձանն ևս շինված է XIII դարում:

Գ. Յ ե ռ ռ ռ ռ զ հ ու շ ա ռ ձ ա ն ը կ ի ղ է գ ա վ թ ի հ ա ռ ա վ ա յ ի ն պատին (Ալբ. նկ. 18): Փոքրիկ է, շինված է ամբողջովին սրբա- տաշ քարից. գմբեթ չունի. կտուրը ծածկված է սալքարերով, վո- ռոնց մի մասը թափված է: Հուշարձանի թե մուտքը և թե ար- տաքին պատերը զարդարված են նուրբ քանդակներով (Ալբ. նկ. 19, 20, 21): Նման քանդակներով զարդարված են նաև ներ- սի սյուներն ու պատերը: Առաստաղը բաղկացած է մեկ կամա- րից: Խորանաձև սեղանի պատերը նույնպես քանդակներ ունեն: Բեմի աջ և ձախ կողմերում կան յերկու փոքրիկ խորաններ: Հուշարձանի յերկարությունն է 6,90, իսկ լայնությունը 5,38 մետր:

Այս հուշարձանի կառուցումն սկսվել է ՈՁԶ (1237) թվին, սակայն միաժամանակ անավարտ է մնացել՝ «քան զի ե կ ն Ս ու լ տ ա ն ն Խ ո ռ ա ս ա ն ա յ Զ ա լ ա լ ա տ ի ն ն կ ո չ է ց ե ա լ և է հ ա ը զ զ օ ը ս հ ա յ ո ց և վ ը ա ց և ա լ ե ռ ե ա ց զ բ ա զ ու մ գ ա լ ա ո ս» (Կ. Գանձակեցի): Այնուհետև՝ «այր ոմն, Գրիգոր ա- նուն, կապալեցի» շարունակեց և ավարտեց ՈՂ (1241) թվին:

Ե. Տ ա պ ա ն ա տ ու ը ն (Ալբ. նկ. 15).— Գլխավոր հուշարձանի աջ կողմում բարձրանում է մի յերկհարկ շենք, վորի գմբեթը ներ- կայունն քանդված է: Այս շենքի ներքնահարկի պատերը շին- ված են մեծ, անտաշ քարերով: Վերնահարկի ամրությունն ա- պահովելու համար՝ ներքնահարկի ներսում սրբատաշ քարից ճարտարապետական բարձր արվեստով կառուցված են չորս խա- չաձև կամարներ, վորոնց վորտքերը հաստատված են չորս պա- տերի մեջ զետեղված ութ կիսասյուների վրա (Ալբ. նկ. 22):

Վերնահարկը շինված է խաչաձև և ունի մեկ դուռ՝ հարա- վային կողմից և յերկու սեղաններ: Տապանատունը շինել են յերկու յեղբայրներ՝ Դասապետ և Կարապետ, ինչպես այդ յերե- վում է ՁԽ (1291) թվականը կրող արձանագրությունից:

Զ. Ս ե դ ա ն ա տ ու ը ն.— Տապանատան պատին կից է սեղա- նատունը, վորի պատերն են միայն մնացել: Սա մի ընդարձակ շենք է, շինված մեծ, անտաշ քարերով: Յերկարությունն է 17, լայնությունը 12 մետր:

Է. Խ ա չ ա ռ ձ ա ն ն ե ռ.— 1) Յերրորդ հուշարձանի դռան աջ և ձախ կողմերում դրսից դրված են յերկու խաչարձաններ՝ հրաշալի քանդակներով, վորոնք իրենց նուրբ արվեստով հայկա- կան բոլոր հայտնի խաչարձանների շարքում այդ խաչարձան- ները դարձնում են բացառիկ: Դռան հարավային կողմում յեղած խաչարձանն առանց պատվանդանի յե և ներքևի մասից կտորը- ված* (Ալբ. նկ. 23): Մյուս, պատվանդանավոր խաչարձանի (Ալբ. նկ. 24) ներքևում քանդակված է «Պ ա լ դ ո ս», վոր, անշուշտ, շինող վարպետի անունն է: Բացի դրանից, այդ խաչարձանի վրա յեղած արձանագրությունից յերևում է, վոր այն կերտված է 1291 թվականին: 2) Յերկու հատ քանդակազարդ խաչարձան- ներ՝ պատվանդանների վրա, առանց արձանագրության, գտնվում են յերկրորդ հուշարձանի («սուրբ Գրիգոր») հարավային պատի տակ (Ալբ. նկ. 16):

Ը. Մ ա տ ու ը ն ե ռ.— Առաջին մատուռ. գտնվում է յերկրորդ և յերրորդ հուշարձանների արանքում, գավթի հա- րավային կողմում: Կառուցված է սրբատաշ քարից, յերկու խո- րաններով, վրան մի քանդակազարդ խաչարձան: Կանգուն է:

Յ ե ռ կ ռ ռ ռ զ մ ա տ ու ը ն.— Ավերակ վիճակում. գտնվում է

* Այս խաչարձանը 1936 թվի հուլիսին փոխարկված է Յերևան՝ Պետա- կան Պատմական Թանգարանը:

150851
Ծ-28051



գլխավոր հուշարձանի արևելյան կողմում, կառուցված է սրբատաշ քարից:

Թ. Գոշի դամբարան.— Գտնվում է Գոշ գյուղից քիչ վերև: Կառուցված է հասարակ քարից:

Ժ. Վարպետ Պաւղոսի գերեզմանը.— Մխիթար Գոշի դամբարանի հարավային կողմում կա համեստ խաչարձանով մի տապանաքար, վորի տակ թաղված է Գոշավանքի յերկու նշանավոր խաչարձանների տաղանդավոր ստեղծագործող վարպետ Պաւղոսը:

ԺԱ. Սուրբ Հռիփսիմեյի մատուռ.— Շինված է Գոշ գյուղի հարավային կողմում, սրբատաշ քարից, կիսավեր վիճակում: Կառուցման թվականն է 1254. անսյուն է, ունի գմբեթ և արձանագրություն: Քառակուսի յե՝ 5,70 մետր լայնությամբ և նույնքան յերկարությամբ:

3. ՋՈՒԽՏԱԿ-ՎԱՆՔ

Դիրիջանից Կիրովական տանող խճուղով անցնելով 4 կիլոմետր, հասնում ենք իրար հետ միացող յերկու գետակների: Այդ գետակների միացման տեղում կառուցված կամրջի վրայից անցնելով խճուղին թեքվում է դեպի ձախ և մտնում Աղստեվ գետի հովիտը: Դեռևս կամրջին չհասած՝ խճուղուց բաժանվում է մի սայլուղի, վոր անցնելով Բլրան-չայ գետակի հովտով, հասնում է Թթու-շուր աղբյուրին: Այդ աղբյուրից քիչ բարձր, դեպի աջ ծովում է մի կածան, վոր և տանում է Ջուխտակ-վանքը:

Ջուխտակ-վանքը յերկու իրար մոտ շինված հուշարձաններ են (Ալբ. նկ. 25):

Ա. Արևելյան կողմի հուշարձանը (Ալբ. նկ. 26, 27) շինված է չորս կամարների վրա, ունի գմբեթ, չորս փոքր խորաններ, բեմ, հուշարձանի յերկարությունն է 9,79, լայնությունը 7,57 մետր, առանց սյունների յե: Յերկու վերին փոքր խորանները զարդարված են նրբաքանդակ որնամենաներով: Հուշարձանը կանգուն է, սակայն խարխուլ վիճակում: Ներսի և դրսի պատերի վրա կան արձանագրություններ, վորոնք վերաբերում են XII դարին:

Բ. Արևմտյան կողմի հուշարձանը (Ալբ. նկ. 25) շինված է առանց սյունների, մի կամարի վրա: Քառակուսի յե, առանց գմբեթի. ունի բեմ, յերկու փոքր խորաններ, չորս լուսամուտ և

մեկ դուռ՝ արևմտյան կողմից: Յերկարությունն է 8,62, լայնությունը 6,40 մետր: Շինված է 1201 թվականին: Հուշարձանի թե ներսի և թե դրսի պատերի վրա կան արձանագրություններ, վորոնք վերաբերում են XIII դարին: Հուշարձանը կանգուն է՝ վորոշ խախտումներով:

Յերկու հուշարձանի շուրջը կան գերեզմաններ:

4. ՄԱԹՈՍԱՎԱՆՔ

Ջուխտակ-վանքի հարավակողմը, մի կանաչադարձ սարահարթի հարավ-արևելյան ծայրում գտնվում է Մաթոսավանքը (Ալբ. նկ. 28): Դա մի փոքրիկ յեկեղեցի յե, շինված առանց սյունների, մեկ կամարի վրա, 1247 թվին, մասամբ սրբատաշ, մասամբ հասարակ քարից: Պատերի մեջ կան քանդակազարդ խաչքարեր: Գտնվում է կիսավեր վիճակում: Հուշարձանի վրա կան արձանագրություններ:

Մաթոսավանքի հյուսիսային պատի մոտ արտաքուստ գտնվում է մեկ խաչարձան, վորի յերկարությունն է, առանց պատվանդանի, 2,50 մետր, իսկ լայնությունը՝ 1,20 մետր: Այս խաչարձանի վրա քանդակված արձանագրությունից յերևում է, վոր այն շինված է 1251 թվին:

5. ՎԻՇԱՊ

Սևանա լճի հյուսիսային ափից վոչ հեռու, Արգանիշ գյուղը տանող ճանապարհի մոտակայքում ընկած է մեկ «վիշապ» (Ալբ. նկ. 29):

«Վիշապները» ջրի կուլտ պատկերացնող հուշարձաններ են, վորոնք ապացուցում են հնագույն նախնադարյան կուլտուրայի գոյությունը Հայաստանում, վոր նախորդել է ուրարտա-խաղական կուլտուրային: Այդ հնագույն կուլտուրան տեղ է յերկար և ընդգրկել է նեոլիթը («նոր քարը») և բրոնզե դարը: Այդ կուլտուրային է պատկանում հնագույն, չափազանց սրամտորեն կառուցված ջրաբաշխական սիստեմը, արհեստական լճերով-ջրամբարներով և ջրանցքների խիտ ցանցով, վորոնք ընդգրկում են Հայաստանի գրեթե ամբողջ միջնաշխարհը: Վուստաման հենց այդ արհեստական սիստեմի հետ ել կապված է «վիշապների» ծագումը, վորոնք, վորպես ջրի աստվածներ, պաշտվել են Հայաստանի նախնադարյան շրջանի ընակիչների կողմից:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՏ
ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

I. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՁԵՆՔԵՐ

Ա. ԲԵՐԴԵՐ, ՊԱՀԱԿԱՆՈՑՆԵՐ

1. Քյալլա-Մինարա.— հին պահակատուն Սևանա լճի ափին, Ծովագյուղից (Զիրուխլու) հարավ, խճուղու վրա:
2. Բերդ ցիկլոպյան.— նաղեժդինո գյուղի մոտ (Սևան):

Բ. ՀԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

1. Մաթոսի գյուղ—գյուղատեղի, գտնվում է Բլրան-չայ գետակի աջ ափի հարթության վրա, Թթու-Նուր աղբյուրի մոտ, դեպի հարավ:
2. Թառատափ—հին գյուղատեղի, Ծովագյուղի շրջանում, լճի ափին, դեպի հյուսիս:
3. Հախկլու—գյուղատեղի, գտնվում է թուրք Հախկլու գյուղի մոտ:
4. Հին Շարխաչ—գյուղատեղի, գտնվում է Գոշ գյուղից դեպի հյուսիս-արևմուտք:
5. Աշուղի գյուղ—գյուղատեղի, Զարխեչ գյուղի մոտ:
6. Յեղցու-թալա— դաշտամաս, ուր կա գյուղատեղի. գտնվում է Աշուղի գյուղ գյուղատեղիից քիչ վերև:
7. Աշգոդան—գյուղատեղի, գտնվում է Շամախյան գյուղից դեպի հյուսիս:
8. Գյուղատեղի—գտնվում է վ. Ճամբարակ գյուղից դեպի արևմուտք, վտակի ձախ ափի բարձունքում:
9. Բախտիար—գյուղատեղի, գտնվում է Աղստեվ գետի աջ ափին—հովտում:
10. Դիլի— հին գյուղատեղի, Դիլիջանից դեպի արևելք, գյուղին կից, խճուղուց վերև:
11. Գյուլյանդ—Մուղղուզ սարի տակ, «Սև հողերի» մոտ, հին գյուղատեղի, գերեզմանատնով և քանդված յեկեղեցիով:
12. Փոլագ գյուղ—հին գյուղատեղի և գերեզմանատուն (ձորից վերև, դեպի սարք):

II. ԿՐՈՆԱԿԱՆ ՁԵՆՔԵՐ

Ա. ՅԵԿԵՂԵՑԻՆԵՐ ՅԵՎ ՄԱՏՈՒՌՆԵՐ

1. «Ս. Սարգիս»—մատուռ. գտնվում է Շամախյան (Պողոս-քիլիսա) գյուղի մոտ՝ դեպի արևմուտք:

2. «Ս. Աստվածածին» յեկեղեցի, գեղեցիկ կառուցվածքով. գտնվում է Ծովագյուղի մեջ:
3. Մատուռ.— Գտնվում է Թուրք Հախկու գյուղի մոտ, նույնանուն գյուղատեղիում, կանգուն վիճակում:
4. Հին յեկեղեցի, ավերակ—գտնվում է Ջարխեչ գյուղի մոտ, Յեղցու-Թալա կոչված գյուղատեղիում:
5. Հին յեկեղեցի—ավերակ վիճակում— գտնվում է Չայքենդ գյուղի մեջ:
6. Հին յեկեղեցի—ավերակ վիճակում. գտնվում է Չայքենդ գյուղից քիչ վերև:
7. «Ս. Աստվածածին» յեկեղեցի—կառուցված սրբաբառաշ քարից. գտնվում է Վերին Ճամբարակ գյուղում:
8. Հին յեկեղեցի—ավերակ. գտնվում է Վերին Ճամբարակից դեպի արևմուտք յեղած գյուղատեղիում:
9. Յեկեղեցի—Արղանիչ գյուղի արևելյան կողմի բլուրներին մեկի վրա:
10. Յեկեղեցի—փոքրիկ, գտնվում է Նաղեժգինո-Շորժա գյուղի արևելյան կողմի բլրածև լանջին:
11. Յեկեղեցի—փոքր, պարսպապատ. նույն բլրի գագաթին:
12. Յեկեղեցի, վորի հիմնապատերն են մնացել. գտնվում է Թոխլուջա գյուղում:
13. Յեկեղեցի—կիսավեր, գտնվում է Աղստեվ գետի և Դիլիջանի վտակի միացման վայրում:
14. Յեկեղեցի—ավերակ. Դիլիջան գյուղի վերին թաղում:
15. Յեկեղեցի—հին, Դիլիջան գյուղի մեջ, գետի ափին:
16. Յեկեղեցի—ավերակ. Դիլիջանի մոտ, Դիլի գյուղատեղիում:

Բ. ԳԵՐԵՉՄԱՆԱՏՆԵՐ, ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ, ԽԱԶԱՐՁԱՆՆԵՐ

1. Գերեզմանատուն—քանդակազարդ տապանաքարերով և խաչարձաններով: Գտնվում է Մաթոս-գյուղ կոչված գյուղատեղիում, Մաթոսավանքի շուրջը:
2. Հեթանոսական շրջանի դամբարաններ—Դիլիջանի մոտ, Գոլովինոյի նորակառույց սանատորիայի վայրում:
3. Աստվածընկալ— հիմնաքարերը սրբաբառա, տա-

նիքը նորոգած. Ծովագյուղից դեպի արևմուտք, ձորի բերանին, Բալըղ-չայ գետակի ափին:

4. Գերեզմանաքարեր, խաչքարեր — Թառնատափ գյուղատեղիի ավերակներում (Ծովագյուղի մոտ—Սևանի լճի հյուսիսակողմի ափում):
5. Գերեզմանատուն—տապանաքարերի վրա կենցաղային քանդակներ. Ծովագյուղի մեջ:
6. Գերեզմանատուն—գտնվում է Թուրք Հախկու գյուղի մոտ, նույնանուն գյուղատեղիում:
7. Գերեզմանատուն—գտնվում է Հին Շար-խաչ գյուղատեղիում, Գոշավանքից դեպի հյուսիս-արևմուտք:
8. Գերեզմանատուն—գտնվում է Աշուղի-գյուղ գյուղատեղիում, Ջարխեչ գյուղի մոտ:
9. Վիմախաչեր—Գոշավանքից դեպի Թարսա-չայ գետը տանող ճանապարհին:
10. Խաչարձաններ խուճբ.— Գտնվում է Գոշավանքից դեպի հյուսիս-արևմուտք, հին Շար-խաչ գյուղատեղիի մոտ, մի բարձր քարածայուի վրա:
11. Գերեզմանատուն— խոշոր տապանաքարերով և քանդակազարդ խաչարձաններով: Կան տապանաքարեր XIII և XIV դարերի: Գտնվում է Գոշավանքի հուշարձանների շրջակայքում:
12. Գերեզմանատուն—տապանաքարերով և խաչարձաններով, գտնվում է Գոշ գյուղի հարավային կողմում:
13. Գերեզմանատուն—հին, ընդարձակ. գտնվում է Չայքենդ գյուղի մեջ, ավերակ յեկեղեցու շուրջը:
14. Գերեզմանատուն—գտնվում է Վերին Ճամբարակ գյուղից դեպի արևմուտք, հին գյուղատեղիում:
15. Դամբարանների դաշտ, ուր կան դամբարանների գրեթե բոլոր տիպերը. այդտեղ կալայանք կատարել և պեղումներ. գտնվում է Նաղեժգինո-Շորժա գյուղի և Աղա-Թափա թերակղզու արանքում, ճահճուտ հարթուքյան վրա, լճի ափին:
16. Խաչարձաններ—մի քանի հատ, առանց արձանագրության. գտնվում են Թոխլուջա գյուղում:
17. Գերեզմանատուն.— հին, ընդարձակ. Դիլիջան գյուղի մեջ:

1. Կիրակոս Գանձակեցի—«Պատմութիւն Հայոց».
 2. Չառնշյան—«Ստորագրութիւն Հին Հայաստանի».
 3. *H. Я. Марр и Смирнов*—«Вишапы».
 4. Մ. Բարխուդարյան—«Արցախ».
 5. «Ազգագրական հանդես», X.
 6. Շանխարու ճի—«Ստորագրութիւն», հատ. II.
 7. Մեռոպ Սմբատյան—«Գեղարքունիք».
 8. Փափազյան—«Հնութիւնք Հայրենեաց» (Ալբոմ).
 9. Ս. Զալալյան—«Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան».
 10. Ս. Եփրեկյան—«Պատկերագրք բնաշխարհիկ բնոտարան», հատ. I, բ. հրատարակ.։
 11. «Արաբ», 1892 թ., գիրք Բ.
 12. Ս. Զանաւեիս—«Վրաստանի համառոտ պատմութիւն» (սկզբից մինչև XIII դար).
 13. Հնութիւնները հանպանութեան Կոմիտեյի և Հուշարձանները Պահպանութեան Կոմիտեյի արեւելիկ նյութերը և հրատարակութիւնները։
- Հետաքրքրվողներն արձանագրութիւնները կարող են գտնել վերոհիշյալ գրականութեան մի մասի, Կ. Կոստանյանի «Վիճակն տարեգրի» ու Ղ. Ալիշանի «Այրարատ»-ի մեջ։

ИСТОРИЧЕСКИЕ ПАМЯТНИКИ ДЕЛИЖАНСКОГО РАЙОНА.

I. АГАРЦИН.

В 14-ти километрах от Делижана, на левом склоне богатого холодными источниками и покрытого лесом глубокого ущелья, расположены древние памятники Агарцина. Есть две дороги в Агарцин. По одной из них, горной и сравнительно короткой, можно передвигаться только пешком. Дорога эта проходит через поля сел. Шамахян (Погоскилиса), пересекает небольшой горный хребет и спускается в Агарцин с юго-западной стороны. Другой путь проходит по Иджеванскому шоссе. На седьмом километре от Делижана, не доходя сел. Чархеч, у слияния двух речек: Акстафинки и Агарцинки, дорога проходит через мост и сворачивает в Агарцинское ущелье. Здесь дорога переходит в проселочную. Еще один километр пути и дорога вступает в густой лес. Постепенно подымаясь по берегу речки и перейдя деревянный мост, дорога сворачивает влево и поднявшись еще выше, приводит прямо в Агарцин. Эту часть дороги (примерно 7 километров) благодаря богатству окружающей природы можно с удовольствием пройти пешком.

В Агарцине имеется группа памятников.

1. Главный памятник называется „Сурп-Аствацацин“. Построен в 1071 году, но еще в полной сохранности. Внутри и снаружи на стенах имеются надписи.

2. Второй памятник называется „Сурп-Григор“. Построен в XI веке и до сих пор хорошо сохранился. Расположен памятник на юг от главного памятника.

3. Притвор является пристройкой ко второму памятнику. Выстроен он в начале XIII века с большим искусством.

4. На юг от притвора имеются три надгробных камня: на одном из них выбита надпись „Царь Смбат“, а на другом — „Это могила царя Гагика“.

5. На восток от второго памятника находится третий памятник, под названием „Сурп-Степаннос“. Выстроен он в 1244 году с большим вкусом.

6. Четвертый памятник, XII века, базиличного типа, расположен на юг от главного памятника.

7. Трапезная. По типу своему, это гражданская постройка.

Среди памятников Агарцина она является шедевром. Ее нервюрное перекрытие выстроено с величайшим архитектурным талантом.

Построил ее в 1248 году строитель по имени Минас. По своей архитектуре, среди гражданских памятников Армении она занимает исключительное место.

8. На восточных холмах Агарцина имеются три полуразрушенные часовни и склепы, а вокруг них ряд красивых хачкаров.

II. ГОШАВАНК.

Гошаванк и одноименное с ним селение (Гош) находятся от Делижана на восток, примерно в 17-ти километрах, на красивом плоскогорье, расположенном на высоте 1250 м. от уровня моря.

Из Делижана в Гошаванк можно попасть двумя дорогами. Одна более короткая является тропинкой и имеет всего около 10-ти километров в длину. От Делижана она идет на восток, проходит густыми лесами мимо прелестного озера по имени „Парз-гел“ (прозрачное озеро) и спускается затем к Гошаванку с запада. Другая дорога более длинная. Нужно ехать по Иджеванскому шоссе до большого моста, расположенного в 11-ти километрах от Делижана, ниже сел. Чархеч. Здесь у моста отделяется другая шоссе́нная дорога и идет на сел. Кармир. Пройдя этим шоссе́ около 3-х километров, надо свернуть направо на горную дорогу, ведущую прямо в сел. Гош. Большую часть дороги можно проехать на машине либо на подводе, и толь-

ко последнюю горную часть дороги нужно идти пешком или же ехать верхом на лошади.

Гошаванк состоит из ряда памятников:

1. Главный памятник называется „Сурп-Аствацацин“. Построил его известный собиратель древне-армянских законов, автор „Датастанагирк“-а Мхитар Гоц в 1191 году. В архитектурном отношении она весьма любопытна.

2. Притвор является пристройкой к главному памятнику и выстроен одновременно с ним.

3. Второй памятник называется „Сурп-Григор“. Расположен он у южной стены главного памятника. Построен в XIII веке. Купол его уже обрушился. Он богат орнаментацией.

4. Третий памятник построен в 1237 году. Расположен он у южной стены Притвора. Купола он уже не имеет. Стены его украшены великолепными орнаментами.

5. Склеп построен с южной стороны главного памятника. Он двухэтажный. Нервюрное перекрытие нижнего этажа в архитектурном отношении представляет большой интерес. Склеп этот построен в 1291 году.

6. Монументальный хачкар расположен направо от двери третьего памятника. Поставлен он на каменный пьедестал. Своей чудесной тонко-ажурной орнаментацией занимает исключительное место среди богатой коллекции хачкаров Армянской ССР. Высечен он в 1291 году, мастером Павгосом (Павлом), который и похоронен вблизи этих памятников.

7. Часовня „Святой Рипсимэ“. Построена на сев.-зап. окраине селения Гош, из гладкотесанных камней.

III. ЧУХТАК — ВАНК.

В 4-х километрах от Делижана по Кироваканскому шоссе, там, где сходятся Блданчай с Акстафинкой, имеется мост, через который проходит шоссе на Кировакан. Не доходя этого моста, от шоссе отходит вправо проселочная дорога, которая по берегу Блданчая доходит до род-

dan birinin yzərində „Smbat padşah“ digərinin yzərində isə „Bu gəbir Qaqik padşahın qəbridir“ dejə həkk edilmişdir.

5. İkinci abidənin şərq tərəfində „Surp Stepanos“ adlı daşyan ucunçy abidə vardır. Bu bina 1244-nçy ildə bəyjk zovklə tikilmişdir.

6. XII əsrə aid və muxtəlif tipli dərđynçy abidə baş abidənin cənub tərəfindədir.

7. Manastır jeməxanası, (tropez), öz tipinə görə, vətəndaş tikililərindəndir.

Haqartsin abidələri arasında bu bina şah əsəridir. Onun xacvari kəmərləri ən bəyjk arxitektura talantı ilə tikilmişdir.

Onu inşaatsı Minas 1248-ildə tikmişdir. Bu bina, öz arxitekturası cəhətilə Ermənistanın vətəndaşlıq abidələri arasında mystəsna jer tutur.

8. Haqartsinin saq tərəfindəki tərələr yzərində qismən daqlımsı uc kicik kilsə və tyrbələr və bunların ətrafında bir sıra gözəl xacqarlar vardır (xacdaşlar).

II. Q I O Ş A V A N Q

Qoşavanq və ejni adı daşyan Qoş kəndi, Diliçanın təqribən 17 kolometro şərqində, dənizin səthindən 1250 metro hündürlükdə olan gözəl bir jayla yzərindədir.

Diliçandan Qoşavanqa gedən iki jol vardır. Bunlardan biri və daha qıssası 10 kilometro uzunluqundadır. Diliçandan başlajaraq şərqə doqru gedir, sıq meşələr icindən, „parz-gəl“ (şəffaf gəl) adlanan gəlyn jayından kecir və daha sonra Qoşavanqın qərb tərəfinə enir. Digər jol daha uzundur. Bu ikinci jolla gedəndə İçevan şossesilə, Diliçandan 11 kilometro məsafədə Carxec kəndindən aşaqıdakı bəyjk kərpyədək getməli. Burada, kərpydən Qarmir kəndinə gedən başqa bir şosse jolu ajrılır. Bu şosse jolu ilə 3 kilometro getdikdən sonra, saq tərəfə, Qoş kəndinə gedən daqlıq jola dənmalı. Bu jolun bəyjk qismini avtomobil jaxud fajtonla getmək mymkündür, jolun ancaq daqlıq qismini pijadə jaxud atla getmək lazımdır.

Qoşavanq bir sıra abidələrdən ibarətdir.

1. Baş abidə „Surp Atsvatsatsin“ adlanır. Bunu, kəhnə erməni qanunlarına toplajan və „Datastanakirk“-in (Divanna-

mə) avtoru məşhur Mxitar Qoş 1191-nçi ildə tikmişdir. Arxitektura noqtəji nəzərindən son dərəcədə maraqlıdır.

2. Məbəd dəhlizi, baş abidə ilə ejni zamanda tikilmiş və ona bir ilavə olan tikilidir.

3. İkinci abidə „Surp Qriqor“ adlanır. Baş abidənin cənub divarı tərəfindədir və XIII əsirdə tikilmişdir. Bu abidə ornamentlərlə zəngindir.

4. Ucunçy abidə 1237-nçi ildə tikilmişdir.

Bu, dəhlizin cənub divarı tərəfindədir. Qybbesi coqdan joxdur. Divarları qəşəng ornamentlərlə bəzənmişdir.

5. Tyrbə, baş abidənin cənub tərəfindədir. O, iki mərtəbəlidir. Alt mərtəbəsinin xacvari kəmərləri arxitektura noqtəji nəzərindən coq maraqlıdır. Bu tyrbə 1291-nçi ildə tikilmişdir.

6. Ucunçy abidənin qarısının saq tərəfində monumental xacqar vardır. Bu xacqar daş qaidə xzərinə qojulmuşdur və qəşəng, inçə-azur ornamentlərilə, Ermənistan SSR-nin zəngin qolleqsijası icində mystəsna jer tutur. O, 1291-nçi ildə USTA PAVQIOS (Pavel) tərəfindən həkk edilmiş və həmin usta bu xacqarın jayında da basdırılmışdır.

7. „Surp Hripsimə“ kicik kilisəsi Qoş kəndinin şimali-qərb tərəfində, dyz jonulmuş daşlarla tikilmişdir.

III. C U X T A Q — V A N Q

Diliçandan 4 kilometro məsafədə Kirovaqan şossesi yzərində, Bldancaj ilə Aqstava cəlynin birləşdiyi jerdə bir kərpy vardır ki, Kirovaqan şossesi bu kərpy yzərindən kecir. Hələ kərpyə catmadan şosse jolundan saq tərəfə doqru kənd jolu ajrılır ki, bu Bldan cəj bojunca „Ttu-çur“ (turşu su) bulaqına qədər catır. Həmin bulaqdan bir az juqarda bir tərəfə doqru bir çyqır ajrılır ki, bu çyqır Cuxtaq-vanqa gedir.

Cuxtaq-vanq iki abidədən ibarətdir.

Birinçi abidə XII əsirdə tikilmiş və „Surp Qriqor“ adlanır, ikinci abidə isə (birincinin qərb tərəfində) 1201-nçi ildə gybbəsiz tikilmişdir.

Hər iki abidə arxitektura cəhətçə xejli maraqlıdır.

IV VIŞAP (ƏZDƏHA)

Ardaniş kəndinə gedən yol jaqьnьnda bir Vişap jatьr. Ermənistanda birinçi dəfə olaraq Vişaplar 1909-10-ncy illərdə aqademiq N. J. Marr tərəfindən tapьlmьşdır.

Bu Vişap daşdan qajьlmьşdır, 5 metro uzunluqundadır və balьq şaklindədir. Bunlar, qəbilə quruluşu eroxasьnda su perəstişi ile əlaqədar olan abidələr qateqorjasьna mənsubdur.

LES MONUMENTS HISTORIQUES DE LA RÉGION DE DILIDJAN.

I. HAGHARTSIN.

Les célèbres monuments d'Haghartsin se trouvent à 14 kilomètres de Dilidjan sur le versant gauche d'une profonde vallée boisée, riche en sources glaciales.

Deux routes mènent à Haghartsin, l'une d'elle, à travers mont, relativement courte, accessible seulement à pied, passe par les mines de Chamakhiane (Poghoskilissa) direction nord et coupe la courte chaîne de montagnes pour atteindre Haghartsin du côté sud-ouest. L'autre, par la chaussée d'Itchévan, à 7 kilomètres exactement de Dilidjan, avant l'arrivée au village de Dcharkhetch, franchit le pont se trouvant au confluent des rivières Haghartsin et Aghstève et s'oriente vers la vallée de Haghartsin, là, quittant la chaussée d'Itchévan, elle traverse un espace à découvert sur un kilomètre environ et pénètre dans l'épaisse forêt, longeant ensuite les rives de Haghartsin, elle monte progressivement pour traverser un large pont en bois d'où elle tourne à gauche; montant encore, elle arrive directement à Haghartsin. Bien que cette partie de la route se déroule sur une longueur de 7 kilomètres environ, elle offre une telle vue pittoresque qu'on peut également avec agrément la franchir à pied.

1. L'église principale s'appelle „Sourb Astvatsatsin“ (Sainte Vierge); construite en 1071, elle est entièrement conservée; on y trouve des inscriptions tant à l'intérieur qu'à l'extérieur.

2. La seconde église s'appelle „Sourb Grigor“ (Saint Grégoire); elle date du XI-ème siècle; située au côté méridional de l'église principale elle est également conservée.

3. Le porche, sis auprès de la seconde église, date

du début du XIII-ème siècle. La construction est d'un grand art architectural.

4. Au bas du mur méridional du Porche on trouve trois pierres tombales; l'une d'elles porte l'inscription: „Roi Sembat“, l'autre: „Ici repose le roi Gaghik“.

5. La troisième église s'appelle „Sourp Stépanos“; (Saint Etienne). construite au côté est de „Sourp Grigor“, elle date de 1244. La construction présente une grande valeur architecturale.

6. La quatrième église est construite au côté méridional de l'église principale au XII-ème siècle. Elle est sans coupole.

7. Le réfectoire appartient par son genre de construction à l'architecture civile et constitue l'ornement des monuments de Haghartsin. Avec ses voûtes entrecroisées elle est d'un art des plus achevés. Elle date de 1248. L'architecte en est le dit Minas. Ce monument occupe une place exceptionnelle dans l'architecture civile des monuments d'Arménie.

8. Sur les côtes est de Haghartsin se trouvent trois chapelles et caveaux autour desquels se trouvent des pierres tombales sculptées avec art.

II. GOCHAVANK.

Gochavank se trouve à 17 kilomètres environ de Dilidjan, direction est. Les monuments se trouvent sur le flanc d'une montagne à 1250 mètres du niveau de la mer, près du village du même nom.

Deux routes mènent de Dilidjan à Gochavank. L'une plus courte, 10 kilomètres environ, est praticable à pied ou à cheval; cette route traversant Dilidjan monte vers l'est, elle passe par d'épaisses forêts et près du beau lac de Parz-Gueul, ensuite elle descend sur Gochavank par le côté ouest. L'autre route est plus longue, il faut aller par la chaussée d'Itchévan jusqu'au grand pont (11 kilomètres) au bas du village de Dcharkhetch, d'où bifurque la chaussée allant à Garmir. A 3 kilomètres environ de cette route, un chemin de montagne tourne à gauche, menant droit au village de Goch. Cette route

est en grande part praticable en voiture et en auto, tandis que le chemin de montagne menant vers Goch en chariot et à cheval.

Gochavank est constitué d'un groupe de monuments.

1. L'église principale s'appelle „Sourp Astvatsatsin“ (Sainte Vierge), on en doit la construction à Mekhitar Goch, le célèbre compilateur des anciennes lois arméniennes. Elle offre de l'intérêt au point de vue architecturale (1191).

2. Le porche sis contre l'église principale a été construit en même temps que celle-ci.

3. La seconde église s'appelle „Sourp Grigor“ (Saint Grégoire); construite contre le mur méridional de l'église principale, elle possède de riches ornements. Elle date du XIII-ème siècle. La coupole est détruite.

4. La troisième église est construite contre le mur méridional du porche. Elle n'a pas de coupole. Elle possède de jolies ornements. Elle date de 1237.

5. Tapanatoun (Mausolée), construit au côté nord de l'église principale, est un monument religieux à deux étages. Les voûtes entrecroisées de l'étage inférieur présentent un grand intérêt architectural. Elle date de 1291.

6. Khatchkar (croix sculptée sur pierre). Au côté droit de la porte de la troisième église s'élève sur un socle un grandiose Khatchkar: l'artiste en est le maître Paghvos, enterré aux alentours du monument. La date en est 1291.

7. La chapelle „Sourp Hripsimé“ (Sainte Ripsimé) a été édifiée en 1254. Elle est construite au côté méridional du village de Goch en pierre polie.

III. DJOUKHTAK-VANK.

A 4 kilomètres de la chaussée menant de Dilidjan à Kirovakan, on atteint le confluent de deux ruisseaux, la route tourne à gauche, après le pont construit sur ce point et pénètre dans la vallée de la rivière Aghstève. Avant d'avoir atteint le pont, une route se détache de la chaussée, passant par la vallée de Belgar-tchaï elle atteint une source appelée „Tetoudjour“. Un peu plus haut que cette source, une sente vers la droite mène à Djoukhtak-Vank.

La 1-ère église s'appelle „Sourp Grigor“ (Saint Grégoire), elle date du XIIème siècle.


La 2-ème église, côté sud, est construite en 1201—sur une voûte, elle est sans coupole. Les deux monuments offrent de l'intérêt au point de vue architectural.

IV. VICHAP (DRAGON).


Un vichap se trouve dans les alentours de la route allant vers Artaniche.

Le premier qui a découvert le vichap en Arménie, est l'académicien N. Ja. Marr (1909—1910). Les vichaps sont des pierres ayant la forme de poisson jusqu'à 5 mètres de longueur. Ils représentent le culte de l'eau à l'époque patriarcale.

Ս Լ Ր Ո Մ
А Л Ь Б О М
A L B O M
A L B U M



1. Հ ա դ ի թ ի ն — Հ ա շ ա ռ ճ ա ն ի ն ի թ ը Ն զ ճ ա ն ու ը ռ տ ե ռ ը .
А г а р ц и н — О б щ и й в и д п а м я т н и к о в .
H a ժ a r t s i n — A b i d a l e r i n y u m i g օ ռ ը ն ս Յ .
H a g h a r t s i n — V u e g օ n օ r a l e d e s m o n u m e n t s .




2. Հ ա դ ա Ր Տ Ի Ն — Հ ու շ ա Ր Ճ ա ն Ե Ր Ի ը ն ճ ա ն ու լ ր տե ն ճ ն ար ի ն ճ ա յ ա ն կողմից.

Агарцин — Общий вид памятников с западной стороны.
 Наժartsin — Abidelerin oğəb tərfindən uşumi göyünəyü.
 Haghartsin — Vue générale des monuments, côté ouest.



3. Հ ա դ ա Ր Տ Ի Ն — Գ լ ի մ ա լ ո Ր Հ ու շ ա Ր Ճ ա ն Ե Ր (X I դ ա Ր).
 Агарцин — Главный памятник (XI в.).
 Наժartsin — Baş abidə (XI əsir).
 Haghartsin — Le monument principal (XI siècle).




4. Հ ա դ ա Ր ծ Ի ն — Գ լ ի ա Վ ո Ր հ ու շ ա Ր Ճ ա ն Ի հ ա Ր ա Վ ա Յ Ի ն մ ու լ ա Ր Ր .
 А г а р ц и н — Ю ж н ы й в х о д г л а в н о г о п а м я т н и к а .
 Н а Գ а r t s i n — В а շ а b i d ə n i n Ը ə n u b Գ ա Ր Ե Յ Կ .
 Н а g h a r t s i n — E n t r é e m é r i d i o n a l e d u m o n u m e n t p r i n c i p a l .



5. Հ ա դ ա Ր Ո Ւ Ն — Բ ա Ր Ե Ր Ե Ր Ի ն Պ ա Վ .
 А г а р ц и н — Б а р е л ь с ь .
 Н а Գ а r t s i n — Н а u t - r e l i e f .



6. Հաղարժին — Յերկրորդ հուշարձան.
 Агарцин — Второй памятник („Сурп-Григор“).
 Hağartsin — İkinci abidə („Surp Qriqor“).
 Haghartsin — Second monument.




7. Հաղարժին — Չափիթ.
 Агарцин — Притвор.


Hağartsin — Dəhliz.
 Haghartsin — Porche.



8. Հ ա դ ա ռ թ ի ն — Թ եր ռ թ թ ղ հ ու շ ա ղ ձ ա ն (Վ Ս ու ռ ղ Ս տեփաննոս).
 А г а р ц и н — Т р е т и й п а м я т н и к („С у р п - С т е п а н н о с“).
 Н а ժ а r t s i n — Կ ս ո լ լ ա ղ ա ղ ձ („Sourp Stepanos“).
 Н а g h a r t s i n — S e c o n d m o n u m e n t („Sourp Stépanos“).




9. Հ ա դ ա ռ թ ի ն — Չ եր ռ թ թ ղ հ ու շ ա ղ ձ ա ն.
 А г а р ц и н — Ч е т в е р т ы й п а м я т н и к.
 Н а ժ а r t s i n — Կ ս ո լ լ ա ղ ա ղ ձ.
 Н а g h a r t s i n — Q u a t r i è m e m o n u m e n t.




10. Հ ա ղ ա Ր Ց Ի Ն — Մ ե ղ ա ն ա տ ա ն ի .
А г а р ц и н — Т р а п е з н а я .

Ո Պ Պ Ր Տ Ի Ն — Մ ա ն ա ժ Ի ղ յ ա ն յ ա ղ յ ա ն ա թ .
Ո գ հ ա Ր Տ Ի Ն — R é f e c t o i r e .




11. Հ ա ղ ա Ր Ց Ի Ն — Մ ե ղ ա ն ա տ ա ն ի ն ե Ր Ք Ի Ն տ ե Ր Ն ա Ր Կ Ե Ղ Վ Ա Ն Կ Ո Ղ Մ Ի Յ .
А г а р ц и н — В н у т р е н н ый в и д т р а п е з н о й с в о с т о ч . с т р о р о н ы .
Ո Պ Պ Ր Տ Ի Ն — Յ ե ղ ա ղ ա ն ա թ յ Ն Ք Ր Չ Ճ Ա Ն Դ Ա Ւ Լ Ի Գ Ե Ր Մ Ն Մ Յ .
H a g h a r t s i n — V u e i n t é r i e u r e d u r é f e c t o i r e , c ô t é o r i e n t a l .




12. Հաղարծին — Սեղանատան ներքին ընդհանուր տեսքը.
 Ага рцин — Общий внутренний вид трапезной.
 Наժարտին — Јетәкхананы дахилдән утими гәгулушү.
 Haghartsin — Vue générale de l'intérieur du réfectoire.




13. Հաղարծին — Սեղանատան հարավային դուռը.
 Ага рцин — Южный вход трапезной.
 Наժարտին — Јетәкхананы сәниб қарьсь.
 Haghartsin — Porte méridionale du réfectoire.



14. Գոշավանք — հռչարձանների ընդհանուր տեսքը.
Гошаванк — Общий вид памятников.
Օյօժավանք — Abidələrin ʉmumi gօղunʉşy.
Gochavank — Vue g n rale des monuments.



15. Գոշավանք — Գլխավոր ճեշարձանը և անդամատանը.
Гошаванк — Главный памятник и склеп.
Օյօժավանք — Ваş abid  v  tyrb .
Gochavank — Le monument principal et le mausol e.




16. Գոշավանք — Յերկրորդ հուշարձանը.
 Гошованк — Второй памятник („Сурп Григор“).
 Օյոսավանգ — İkinci abidə.
 Gochavank — Second monument.




17. Գոշավանք — Յերկրորդ հուշարձանի հարավային պատը.
 Гошованк — Второй памятник. Южная стена.
 Օյոսավանգ — İkinci abidənin cənub divarı.
 Gochavank — Mur méridional du second monument.




18. Գոշավանք — Յերրորդ հուշարձան.
 Гошаванк — Третий памятник.
 Օօժավանք — Կսոյսի անձ.
 Gochavank — Troisième monument.



19. Գոշավանք — Յերրորդ հուշարձանի քանդակազարդ.
 Гошаванк — Третий памятник. Орнаментированный вход.
 Օօժավանք — Կսոյսի անձանի օրնամենտլի չորդ զարծ.
 Gochavank — Entrée sculptée du troisième monument.




20. Գոշավանք — Յերրորդ հուշարձանի արևելյան պարիսպը.
 Гошаванк — Третий памятник. Восточная стена.
 Օլօժավանգ — Կսուչսյ անձանի ֆեդ ճիւղը.
 Gochavank — Mur oriental du troisième monument.



21. Գոշավանք — Յերրորդ հուշարձանի ֆրոնտոնը.
 Гошаванк — Третий памятник. Фронтон.
 Օլօժավանգ — Կսուչսյ անձանի ֆրոնտոնը.
 Gochavank — Fronton du troisième monument.



22. Գոշավանք — Տապանատան ներքին վրձնաշունչերից.
 Гошаванк — Склеп. Нервюрное перекрытие.
 Օյոսավանգ — Կյրծ, ասրարի կաթարլը.
 Gochavank — Colonnes intérieures du mausolée.



23. Գոշավանք — Խաչարձան (Փոխադրված է Յերևանի Պետական Պատմ. Քանդարանը).
 Гошаванк — Хачкар.
 Օյոսավանգ — Խաչաճ (devlét tarix myzesində).
 Gochavank — Khatchkar (transféré à Erivan au musée hisotrique).



24. Գոշավանք — Սաչարձան (գործ վարպետ Պավլոսի):
 Гошаванк — Хачкар (Работа мастера Павла).
 Օշավանգ — Хачдаш (usta Pavlosun işi).
 Gochavank — Khatchkar (oeuvre du maître Paul).



25. Զուխտակ-վանք — Հուշարձանների ընդհանուր տեսքը.
 Чухтак - ванк — Общий вид памятников.
 Çuxtaq-vanq — Abidelerin umumi görünüşü.
 Gochavank — Vue générale des monuments.



26. Ջոկհտակ-վանք — Առաջին հուշարձանի («Սուրբ Գրիգոր»)。
 Чухтак - Чухтак ванк — Первый памятник („Сурп Григор“)。
 Çuxtaq-vanq — Birinçi abidə («Տւրք Օրիգոր»)。
 Djoukhtak-vank — Premier monument („Sourp Grigor).




27. Ջոկհտակ-վանք — Առաջին հուշարձանի արևել. և հյուս. պատերը。
 Чухтак - ванк — Первый пмятник. Восточная и северная стены。
 Çuxtaq-vank — Birinçi abidənin şərq və şimal divarları。
 Djoukhtak-vank — Murs côté est et nord du premier monument



28. Մաթոսավանք.
Матосаванк.

Matosavanq.
Mathosavanq.




29. Վիշապ — Արճանիշի գյուղի մոտ.
Вишاپ — Вблизи сел. Арданиш.

Vişap — Ardaniş kəndi yaxınlığında.
Vişap — Près du village Ardaniş.




30. Գ ու լ ո Վ ի ն ո — Գ ու ճ Ր Մ Ր Մ Ն Ի Ն .
Головино — Курган.

Օ յ լ ո Վ ի ն ո — Չ թ ի Ր Ե Ր Չ Յ Յ ի յ ի .
Golovino — Tombe.





Գ ի Ւ Ւ Չ Ա Ն Ի Չ Ր Չ Ա Ն Ի
Археологическа



Դիլիջանի շրջանի հնագիտական քարտեզը.
Археологическая карта Делижанского района.

Dilidjan rajonunun arxelogija xəritəsi.
La carte archéologique de la région de Dilidjan.




ՀՀ Ազգային գրադարան



NL0788704

ԳԻՆԸ 4 Ռ.



30 MAY 2013

21 711